

Ապարանի բնապահպանական  
տեղեկատվության հասարակական  
կենտրոն



Public Environmental  
Information Center of Aparan

ԹՅՅՅ. ԾԾ, 3103, Ը.ՁՁՁՁՁ, ՊՊՊՊՊՊՁՁ 26  
ԹՅՅ/ՅՅՅՅ +/ 0252/ 6 53 62  
ՅԷ.ՅՅՅ [aarhusaparan@mail.ru](mailto: aarhusaparan@mail.ru)  
Info\_aparan@aarhus.am

Adress Bagramian 26, Aparan, 3103,  
RA  
Tel./Fax +/ 252/ 6 53 62  
E-mail [aarhusaparan@mail.ru](mailto: aarhusaparan@mail.ru)  
Info\_aparan@aarhus.am

Ապարանի Բնապահպանական  
տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոն

ՊՁՁՁ ՁՁՁՁ ՁՁՁՁ  
ՁՁՁՁՁՁՁՁՁ ՁՁՁՁ ՁՁՁՁ ՁՁՁՁ

ԾՁՁՁՁ ՁՁՁՁՁՁ

ԱՊԱՐԱՆ 2011թ.

Կենտրոնի գործունեության ամփոփ նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանում ( 2011թ –ի առաջին կիսամյակ ) կենտրոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ անցկացվել են ավելի քան երեք տասնյակ միջոցառումներ՝ սեմինարներ, դասընթացներ, հանդիպումներ, ցուցահանդես, մրցույթներ, ծառատունկ, սանիտարական մաքրման աշխատանքներ, փորձագետների խորհրդի նիստ, հասարակական քննարկում և այլն, կազմակերպվել են հանդիպումներ հիմնարկությունների, ուսումնական հաստատությունների, ՏԻՄ-երի ներկայացուցիչների, երիտասարդների հետ:

Ստորև, Աղյուսակ I – ում ներկայացված է կենտրոնի միջոցառումների քանակը, տեսակները և միջոցառումների անցկացման ամսաթիվը:

<b>Աղյուսակ I կենտրոնի միջոցառումների ընդհանուր քանակը</b>						
ամիս Միջոցառ- ման անվանում	I	II	III	IV	V	VI
Այցելություններ և աշխատանք. հանդիպումներ	17.01.11. 18.01.11. 29.01.11.		03.03.11.			
Կլոր սեղան- քննարկումներ				07.04.11	27.05.11.	06.06.11. 09.06.11.
Հասարակական քննարկումներ						13.06.11.
Սեմինարներ դասընթացներ	21.01.11.	19.02.11.	17.03.11.	01.04.11. 14.04.11.	18.05.11.	07.06.11.
Ցուցահանդեսներ, մրցույթներ			15.03.11.		20.05.11.	
Դպրոցական. հանդեսներ				13.04.11.		
Հողվածներ Մամուլում						
Շնորհանդեսներ	21.01.11.		17.03.11.	11.04.11.		
Էքսկուրսիաներ						
Գործնական աշխ. Շաբաթօրյակ.				11.04.11.	17.05.11. 21.05.11.	
Ծառատունկ				30.04.11.		
Փորձագետների խորհրդի նիստեր		16.02.11.				
Տարածքի տրամադրում		01.02.11. 02.02.11. 03.02.11. 04.02.11.				
Մասնակցություն այլ կազմակերպ. միջոցառումներին					31.05.11.	07.06.11 14.06.11.
Ընդամենը՝ 35 միջոցառում	5	6	4	7	6	7

Կենտրոնի համակարգողը մասնակցել է այլ կազմակերպությունների բնապահպանական խնդիրների վերաբերող միջոցառումներին, ինչպես նաև կենտրոնի տարածքը տրամադրվել է այլ կազմակերպությունների, միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Կենտրոնը համագործակցել է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ-ի, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԵԱՑԻԱ ՀԿ-ի, «ՏԱՊԱՆ» ԷԿՈ –ԱԿՈՒՄԲ ՀԿ ԱՊԱՐԱՆԻ SPARE ԽՄԲԱԿ –ի, ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏ ՀԿ-ի, Բնապահպան իրավաբանների ու տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա ՀԿ-ի և այլ կազմակերպությունների հետ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն են այցելել **538 մարդ**, կենտրոնի ծառայություններից ( գրադարան, ֆիլմոդարան, պատճենահանում, ինտերնետ, խորհրդատվություն ) օգտվել են ևս **93 մարդ**: Այցելուների ընդհանուր թիվը **630 է**, ինչը կազմում է **Ապարանի բնակչության 9.5 %-ը**:

**Աղյուսակ II- ում ներկայացված է** կենտրոնի միջոցառումների մասնակիցների թիվը և միջոցառումների տեսակը: Սեմինարներն ու դասընթացներն թվաքանակով ամենաշատն են, հաջորդը՝ քննարկումներն են և մյուս միջոցառումները:

<b>Աղյուսակ II</b> մասնակիցների թիվը ըստ միջոցառումների տեսակի			
Միջոցառման անվանումը	Միջոցառումների քանակը	Անցկացման ամսաթիվը	Մասնակիցների թիվը
Այցելություն. աշխատանք. հանդիպում	4	17.01.11. 18.01.11. 29.01.11 03.03.11	5 5 4 3
Կլոր սեղան-քննարկումներ	4	07.04.11 27.05.11. 06.06.11. 09.06.11.	10 7 10 10
Հանրային Քննարկումներ	1	13.06.11	22
Ծառատունկ	1	30.04.11.	20
Սեմինար դասընթացներ	6	21.01.11. 19.02.11 17.03.11. 01.04.11. 14.04.11. 18.05.11	20 20 12 20 15 10
մրցույթներ,	1	15.03.11	100
դպրոցակ. հանդես	1	13.04.11.	50
Ցուցահանդես,	1	20.05.11.	100
Գործն. Աշխատանքներ, Շաբաթօրյակներ	3	11.04.11. 17.05.11. 21.05.11.	15 15 20
Փորձագրի Խորհրդի նիստեր	1	16.02.11.	8
Տարածքի տրամադրում	4	01.02.11. 02.02.11. 03.02.11. 04.02.11	10 10 10 10
<b>ԱՄՅՈՒՆԻՍԿՈՒՄ</b>	<b>29</b>		<b>538</b>

**Աղյուսակ III- ից** երևում է, որ կետորոնի այցելուների և միջոցառումների մասնակիցների մեծամասնությունը կազմում են պատանիները և աշակերտները՝ 44.7%: Հասարակայնության ներկայացուցիչները կազմում են համայնքի բնակչության 29.8% , երիտասարդներն ու ուսանողները՝ 13.4%:

Հասարակության մյուս խմբերի տոկոսային բաժինը 7.5% - ից ցածր է:

Սակայն, պետք է նշել, որ 2010թ-ի նույն ժամանակահատվածի հետ համեմատ, այս տարի ավելացել է կենտրոնի թե, միջոցառումների, թե , մասնակիցների թիվը:

<b>Աղյուսակ III</b>		
<b>Կենտրոնի միջոցառումների մասնակիցների թիվը՝ 538</b>		
ԴԿ ներկայացուցիչներ	8	1.4%
երիտասարդներ (ուսանողներ )	70	13.0 %
Պատանիներ, աշակերտներ	240	44.7%
ԶԼՄ ներկայացուցիչներ		
ՏԻՄ	40	7.5%
Այլ պետական կառույցներ	16	2.9%
Բիզնես սեկտորի ներկայացուցիչներ	4	0.7%
Հասարակայնության ներկայացուցիչներ	160	29.8%
<b>Ընդամենը՝</b>	<b>538</b>	<b>100%</b>

**Աղյուսակ IV - ում** ներկայացված են կենտրոնի ծառայություններից օգտվողների թիվը, որը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 93 մարդ:

Կենտրոնի ծառայություններից օգտվողների հիմնական մասը ուսուցիչներ են , ուսանողներ և դպրոցականներ ( ինտերնետ, պատճենահանում , խորհրդատվություն):

<b>Աղյուսակ IV</b>					
<b>Կենտրոնի ծառայություններից օգտվել են 93 քաղաքացի</b>					
month	գրադարան	ֆիլմոդարան	ինտերնետ	Պատճենահան.	Խորհրդատվութ.
Հունվար	3		4	4	
փետրվար	3	2	4	5	
Մարտ	3	3	4	4	4
Ապրիլ	3	4	6	7	
Մայիս	5	5	6	8	4
Հունիս		2			
<b>Ընդամենը՝ 93</b>	<b>17</b>	<b>16</b>	<b>24</b>	<b>28</b>	<b>8</b>

Կենտրոնի գործունեության ընթացքում գրադարանը և ֆիլմոդարանը պարբերաբար հարստացվում են նոր գրականությամբ, տեսասկավառակներով և շնորհանդեսներով: Կենտրոնում պատրաստվում են *Power Point* ծրագրով ուսուցողական համակարգչային նյութեր: Ուսուցիչները իրենց դասերի ընթացքում օգտագործում են կենտրոնի շնորհանդեսները, որոշ տեսաֆիլմեր:

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը համագործակցել է տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների ( ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՀԿ, «ՏԱՊԱՆ» ԷԿՈ –ԱԿՈՒՄԲ ՀԿ ԱՊԱՐԱՆԻ SPARE ԽՍԲԱԿ, ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏ ՀԿ-, Բնապահպան իրավաբանների ու տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա ՀԿ- ), հասարակայնության ներկայացուցիչների, իրավապահ մարմինների հետ, տրամադրել է տեղեկատվություն, գրականություն: Կենտրոնում անցկացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է [www.aarhus.am](http://www.aarhus.am) , [Facebook.com](https://www.facebook.com/aarhus.am) , [www.aparan.am](http://www.aparan.am) և այլ կայքերի, լրատվական թերթիկների միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանում Կենտրոնի համակարգողը հանդիպումներ է ունեցել «Բնապահպանության Նախարարության Թափոնների ուսումնասիրության կենտրոն ՊՈԱԿ-ի, World Vision –ի աշխատակիցների, Հայկական սեյսմոլոգիայի և Երկրի ֆիզիկայի ասոցիացիայի, Ապարանի անտառտնտեսության և համայնքային այլ կառույցների տնօրենների ու աշխատակիցների հետ, ձեռք է բերվել համագործակցության պայմանավորվածություն:

Կենտրոնում անցկացվող միջոցառումների վերաբերյալ նախնական պայմանավորվածություն ձեռք բերելու նպատակով համակարգողը հանդիպումներ է ունեցել նաև դպրոցների, հիմնարկությունների, ՏԻՄ-երի ներկայացուցիչների, ոստիկանության, հասարակական կազմակերպության անդամների ու աշխատակիցների հետ:

Բաղրամյան 22 և Գ. Նժդեհ 3 շենքերի տարածքների ճահճացման հարցով համակարգողը հանդիպում է ունեցել Ապարանի քաղաքապետի, փոխքաղաքապետի, World Vision –ի աշխատակցի ,համայնքի բնապահպանական հարցերի պատասխանատու աշխատակցի հետ, խնդրին լուծում տալու նպատակով: Ապարանի բնապահպանական խնդիրները քննարկելու և դրանք լուծելու ուղիների վերաբերյալ համակարգողը հանդիպում է ունեցել << ՆԳ-Ապարան >> հայրենակցական հասարակական կազմակերպության տնօրենի հետ:

Կենտրոնի համակարգողը մասնակցել է Ասիական Զարգացման Բանկի, Գյուղատնտեսության Աջակցության Մարզային Կենտրոնի, GIZ (Գերմանիայի զարգացման համագործակցություն) կազմակերպության սեմինարներին:

Ապարանի աղբավայրի հետ կապված խնդիրները քննարկվել են Նիգավան գյուղի բնակիչների հետ ( աղբավայրը գտնվում է գյուղին հարող տարածքում ):

Կենտրոնը աշխատում է համայնքի բնակլիմայական պայմանների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև բնապահպանական հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ առաջարկվող միջոցառումների շուրջ::

Կենտրոն են այցելել մի խումբ բնակիչներ քաղաքային զբոսայգու անմխիթար վիճակի քննարկման հարցով, որը տարիներ առաջ վարձակալվել է ոմն քաղաքացու կողմից, այն բարեկարգելու, վերականգնելու պայմանով: Սակայն տարիների ընթացքում բացարձակապես ոչինչ չի արվել: Քաղաքի բնակիչներն և Օրհուս կենտրոնը նամակով դիմելու են քաղաքապետին այդ խնդրի լուծման ուղղությամբ:

